ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (2020-2025թթ.)

ԵՐԵՎԱՆ 2020

Հաստատված է
Ավանդական բժշկության համալսարանի
10 մարտի 2020թ. Կառավարման խորհրդի N2 նիստում
նախագահ,
Ռեկտոր _____ Ն.Խ.Սարիբեկյան

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
(2020-2025)

Ռազմավարական ծրագիրը ներառում է համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրման հանձնաժողովի կողմից ներկայացված խորհրդատվությունները, ինչպես նաև նախորդ ռազմավարական ծրագրով նախատեսված ողջ գործունեությունը, իրականացման անհրաժեշտ քայլերը և գնահատման արդյունանար ցուցիչները:

Ծրագիրը հնարավորություն կտա կուտակած փորձի, ժամանակակից մարտահրավերների և բարեփոխումների հիման վրա արդյունավետ կազմակերպել ԱԲՀ-ի գործունեության ներկան, նախաձեռնել համալսարանի առավել նպաստավոր և մրցունակ ապագան, ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ երկրի սահմաններից դուրս՝ բժշկական կրթության, բժշկագիտության և առողջապահության ոլորտում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ....4

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ....4

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄՆԱՅՈՒՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ....5

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ....9

1. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ....9

2. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ....19

3. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ....13

4. ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ....15

5. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ....17

6. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ....19

7. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ....21

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Ավանդական բժշկության համալսարանը առաջատար բժշկական բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի գործունեությունը նպատակաուղված է բժշկական կրթության, բժշկագիտության և առողջապահության ոլորտի ազգային և միջազգային աշխատաշուկայի համար բանիմաց, բարձր բարոյականությամբ օժտված, բժիշկ-հիվանդ հարաբերության մեջ իրենց դերը գիտակցող նոր որակի բժիշկների պատրաստմանը, որոնք իրենց պրակտիկ գործունեության ընթացքում ունակ կլինեն ինտեգրել ժամանակակից և գիտականորեն հիմնավորված ավանդական բժշկության ախտորոշման և բուժման մեթոդները:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Ավանդական բժշկության համալսարանը (այսուհետև՝ Համալսարան կամ ԱԲՀ) ձգտում է դառնալ ազգային և միջազգային բարձրագույն ուսումնական հաստատություն, որն՝

- **Ձգտում է զարգացնել իր գերակա ուղղությունները և մրցակցային առավելությունները՝ ինտեգրել գիտականորեն հիմնավորված ավանդական բժշկության և ժամանակակից բժշկության առանձնահատուկ մոտեցումները, դրանք ներդնելով կրթական գործունեությունում, ապահովելով գիտելիքների փոխանցումը տարբեր շահակիցներին:**
- **Առաջարկում է եվրոպական բժշկական բարձրագույն կրթական տարածքի հիմնարար սկզբունքներին համապատասխան կրթական, գիտական, հետազոտական մրցունակ բժշկական ծրագրեր:**
- **Կլինի հասանելի, մատչելի և նախընտրելի բարձրագույն ուսումնական հաստատություն հասարակության ամենատարբեր շերտերի համար, անկախ տարիքից, սեռից, ռասայական ու ազգային պատկանելությունից, համոզմունքներից և քաղաքական նախասիրություններից:**
- **Ունի գործուն, արդյունավետ կառավարում ու վարչարարություն, անհրաժեշտ ենթակառուցվածքներ, ժամանակակից տեխնոլոգիաներ, ուսումնական և լաբորատոր բազա, որը նպաստում է կրթության որակի անընդհատ ու շարունակական բարելավմանը,**
- **Կրթությունը և գիտական հետազոտությունը խթանելու համար, սեփական հնարավորությունների ներդրմամբ ունակ կլինի իրականացնելու զարգացման համակարգված ռազմավարություն:**

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄՆԱՅՈՒՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ

21-րդ դարի նախաշեմին բժշկական կրթությունը, ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ մեր երկրում բախվում է նոր հրամայականների, որն էլ պայմանավորված է կրթության ոլորտում առկա հիմնախնդիրներով: Բժշկական կրթությունը հատկապես կարևորվում է գլոբալ կրթական բարեփոխումների և կրթական միասնական դաշտի ստեղծման առումով:

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (այսուհետ՝ ԱՀԿ) 2002թ.-ին հռչակել է ժամանակակից և ավանդական բժշկության ինտեգրման ռազմավարական ուղիները որպես XXI դարի քաղաքականություն: Ըստ ԱՀԿ-ի ռազմավարության, անդամ պետությունների ազգային քաղաքականությունը պետք է նպատակաուղղված լինի մի շարք խնդիրների լուծմանը, այդ թվում նաև հանրային պահանջարկ ունեցող ավանդական բժշկության համապատասխան մասնագետների պատրաստմանը և որակավորմանը, գիտական հետազոտությունների զարգացմանը, ֆինանսական և այլ միջոցների հատկացմանը:

Այսօր Հայաստանում արդիական են բժշկական կրթության համակարգի բարեփոխումները, և որքան շուտ սկսենք բարեփոխումների գործնական իրականացումը, այնքան արագ կարող ենք արձանագրել, որ Հայաստանի բժշկական կրթության համակարգն արժանի կերպով միացել է համաշխարհային կրթական համակարգին: Յուրաքանչյուր բուհի բնութագրական առանձնահատկությունը որոշվում է այն արժեքներով, որոնց դավանում են նրա շահակիցները: Հայաստանի ավանդական բժշկության համալսարանի համար այդ արժեքները այն հիմնարար սկզբունքներն են, որոնք դրված են նրա գործունեության հիմքում:

1. Կրթական բարեփոխումներ՝ կրեդիտային համակարգի ներդրում

Այսօր, որպես նպատակային դրույթ, դիտարկվում է բարձրագույն կրթության և գիտական հետազոտությունների եվրոպական տարածքում ամբողջովին ինտեգրվելը:

Այդ նպատակով ԱԲՀ-ում ուսումնասիրվել, վերանայվել և մշակվել են իրավական, նորմատիվ ու մեթոդական փաստաթղթերը: Բարեփոխումները սահուն իրականացնելու նպատակով մշակվել են կրեդիտային համակարգին համապատասխան նոր ուսումնական պլաններ, ինչպես նաև կրեդիտների կուտակման հիման վրա ուսանողների փոխադրման, հեռացման և վերականգնման կանոնակարգեր:

Համալսարանն հավատարիմ է իր ավանդույթների և արժեքների շարունակելիությանը: Գործունեության ընթացքում համալսարանը հետևել է մի հիմնական ուղղության. շրջանավարտներին սովորեցնել ինտեգրել ժամանակակից և ավանդական բժշկության ախտորոշման և բուժման մեթոդները և պրակտիկ գործունեության ընթացքում հասնել կայուն արդյունքի, ձեռք բերել ճանաչում ոչ միայն Հայաստանում, այլ նաև նրա սահմաններից դուրս: Համալսարանը անընդհատ ընդլայնելով իր մասնագիտական ուղղությունները, ընդգրկում է նոր կրթական միջոցներ, որոնք կպահպանեն և կզարգացնեն այս խնդիրը:

2. Համալսարանի ներկա վիճակը

Համալսարանում ներկայումս գործում են երկու ֆակուլտետ՝ բուժական և ստոմատոլոգիական: Ուսումնառության ձևը ցերեկային է, մեկ հերթով: Համալսարանում գործում է արդյունավետ կառավարման համակարգ, անհրաժեշտ ենթակառուցվածքներ, ժամանակակից տեխնիկական միջոցներ, ուսումնական և լաբորատոր բազաներ, որոնց գործունեությունը նպատակաուղղված է կրթության որակի անընդհատ ու շարունակական բարելավմանը:

Կառուցվածքային կոլեգիալ մարմիններն են՝ գիտական խորհուրդը, ռեկտորատը, որակի ապահովման հանձնաժողովը:

Կառուցվածքային ստորաբաժանումներն են՝ բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետները, ուսումնական մասը, գիտական մասը, արտաքին կապերի բաժինը, մարդկային ռեսուրսների և ընդհանուր բաժինը, գիտաբժշկական ուսումնական կենտրոնը, գրադարանը, ընթերցարանը, հաշվապահությունը, տնտեսական մասը և մասնագիտական ամբիոնները՝

- հումանիտար առարկաների,
- բնագիտական առարկաների,
- բժշկակենսաբանական առակաների,
- թերապևտիկ առարկաների,
- վիրաբուժական առարկաների,
- սոցիալական բժշկության առարկաների,
- ավանդական բժշկության,
- ստոմատոլոգիայի:

Նշված վարչական և ուսումնաօժանդակ ստորաբաժանումներն ունեն իրենց կանոնադրությունները, կանոնակարգերը, աշխատանքային պլանները, ինչպես նաև համալսարանում տարվող աշխատանքների համար պահանջվող համապատասխան փաստաթղթերը:

Համալսարանը հանրապետության այն եզակի ոչ պետական ուսումնական հաստատություններից մեկն է, որն իր գործունեության 29 տարիների ընթացքում զգալի նվաճումներ է ունեցել սեփական նյութատեխնիկական բազան ստեղծելու գործում:

Համալսարանի զարգացման կարճ պատմության մեջ առանձնահատուկ նշանակություն ունի վերջին տասնամյակը: Այդ ժամանակահատվածը, չնայած անցումային շրջանին բնորոշ լուրջ դժվարություններին, համալսարանի համար եղել է ուսումնական գործընթացի պահպանման, բարեփոխումների, տեխնիկական հագեցվածության և միջազգային համագործակցության ընդլայնման ժամանակաշրջան:

Համալսարանի ուսումնական, լաբորատոր և գործնական աշխատանքներն իրականացնելու նպատակով օգտագործվում են հիմնականում սեփական միջոցները, ինչպես նաև վարձակալված կլինիկաները, լաբորատորիաները և գիտահետազոտական բազաները:

Կլինիկական առարկաների դասընթացներն անցկացվում են վարձակալված Երևան քաղաքի առաջնակարգ թվով 9 կլինիկական բազաներում, որոնք ապահովված են լսարաններով, կաբինետներով և հիվանդասենյակներով, ուսումնական դիդակտիկ պարագաներով, ժամանակակից սարքավորումներով:

2020թ. սկսվել են համալսարանի 5025 մ^2 ընդհանուր մակերեսով, նոր մասնաշենքի կառուցման աշխատանքները, որի նպատակն է բարելավել համալսարանի սեփական ուսումնական բազան, որը միաժամանակ կնպաստի գիտահետազոտական աշխատանքների արդյունավետ կատարմանը: Կատարվում է ուսումնական մասնաշենքի, լսարանների, կաբինետների և լաբորատորիաների արդիականացում և վերանորոգում:

3. Կառավարման համակարգ

Բուհի կառավարումն իրականացվում է համալիր ձևով, որի արդյունավետության բարձրացմանն են ուղղված համալսարանի ստորաբաժանումների աշխատանքները: Համալսարանի կառավարման համակարգը նախորդ տարիներին ապահովել է բուհի զարգացման կայունությունը, երաշխավորել է բարեհաջող իրականացնել նախկինում ընդունված ռազմավարական զարգացման ծրագրերը: Անցած տարիներին համալսարանի կառավարման համակարգի հիմնական ուղղություններն են եղել՝

- Կրթական, ուսումնական ծրագրերը,
- ուսանողների ընդունելությունը,
- որակի ապահովումը,
- ֆինանսների կառավարումը և նյութատեխնիկական բազայի արդիականացումը,
- ստորաբաժանումների աշխատանքների բարելավումը:

4. Կրթական գործունեություն

Համալսարանը կարևորում է յուրաքանչյուր կարողունակ անհատի՝ բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունը և իր ուսանողներին մատուցում է բարձրորակ և մատչելի կրթական ծրագրեր, ուսանողներին տրամադրում է տարատեսակ խորհրդատվական և ֆինանսական աջակցություն: Համալսարանը համագործակցում է մի շարք հասարակական կազմակերպությունների հետ: Համալսարանում իրականացվող բոլոր մասնագիտական կրթական ծրագրերը պարբերաբար մշտադիտարկվում են և իրականացվում անհրաժեշտ բարելավում: Մշակվում են համապատասխան ուսումնամեթոդական ծրագրեր և ընթացակարգեր: Համալսարանում գործում է ուսանողների գիտելիքների պարբերաբար ստուգման և գնահատման բազմագործոն համակարգ:

5.Գիտահետազոտական գործունեություն

Գիտական հետազոտությունները հիմնականում նպատակաուղղված են համալսարանի ռազմավարության նպատակների և խնդիրների իրականացմանը: Համալսարանի գիտամանկավարժական փորձը 1998թ. Կիպրոսում կազմակերպված միջազգային կոնֆերանսում լավագույնս արժևորվեց, և այն գնահատվեց որպես ինտեգրատիվ բժշկության մասնագետներ պատրաստելու առաջին և առաջավոր փորձ:

Պարբերաբար կազմակերպվում են հանրապետական, միջազգային և ներբուհական գիտաժողովներ, սեմինարներ: Տպագրված տեսական և գործնական նշանակություն ունեցող գիտական աշխատանքներից շատերը ներդրվել են գործնական բժշկության մեջ: «Ավանդական բժշկության» ամբիոնի վարիչ բ.գ.թ. Է. Մինասյանի կողմից մշակված հիվանդությունների ախտորոշման, համալիր բուժման, դեղաբույսերի և դեղամիջոցների անհատական ընտրության ինքնատիպ մեթոդը, ըստ ժամանակակից և արևելյան ավանդական բժշկության, ՀՀ կառավարությանն առընթեր Արտոնագրային վարչությունը ճանաչել է որպես գյուտ և շնորհել հեղինակային իրավունք: Իրականացվում է համալսարանի գիտահետազոտական գործունեության հետագա կատարելագործում:

6. Կադրային ներուժի զարգացում

Համալսարանի կադրային ներուժը հիմնականում համապատասխանում է լիցենզիայի պահանջներին: ՄԿԾ-ի իրականացման գործընթացում ընդգրկված են ոչ միայն հանրապետության բարձր որակավորում ունեցող մասնագետները, այլ նաև համալսարանի շրջանավարտները: Համալսարանի դասախոսական կազմը համալրված է մեծ մասամբ հիմնական կադրերով, որոնց ընտրությունը կատարվում է գիտխորհրդի անդամների և ռեկտորի առաջարկությամբ: Դասախոսների ընտրության հարցում մեծ տեղ է տրվում բանիմաց մասնագետներին:

7. Ուսուցման որակ՝ եվրոպական չափանիշով

Ուսուցման որակը շարունակում է մնալ համալսարանի հիմնական նախապատվությունը: Ուսուցման որակի ապահովման համար ձգտում է ինտեգրվել Եվրոպական բարձրագույն կրթական տարածք, ուստի մեզ համար ուղենիշ են կրթության որակի ապահովման եվրոպական չափանիշները: Այդ նպատակով համալսարանում կրթության որակի ապահովման և գնահատման համար գործում է որակի ապահովման և կրթության բարեփոխումների բաժինը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

1. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Իրականացնել արդյունավետ կառավարում և վարչարարություն՝ համաձայն Համալսարանի առաքելությանը

Խնդիր 1.1. Ապահովել ստորաբաժանումների միջև լիազորությունների և գործառույթների արդյունավետ ու հստակ գործառություն:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.	***Առաջընթացի գնահատման ցուցիչներ***
1. Հստակեցնել կառավարման կոլեգիալ մարմինների դերը և գործառույթները ԱԲՀ-ի որոշումների կայացման և կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության համակարգում, ինչպես նաև բարելավել որոշումների կայացման գործընթացներում արտաքին և ներքին շահակիցների ներգրավման մեխանիզմները: 2. Ներդնել ԱԲՀ-ի գործունեության վրա ազդող ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրման ամբողջական համակարգ՝ պարբերաբար իրականացվող հստակ մեխանիզմներով և չափելի գործիքներով, ինչպես նաև ներդնել ռիսկերի բացահայտման և կառավարման համակարգ: 3. Հստակեցնել ԱԲՀ-ի ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականությունը՝ ըստ ռազմավարական գերակայությունների: 4. Մշակել ԱԲՀ-ի էթիկայի կանոնակարգ և կիրառել էթիկայի նորմեր որոշումների կայացման գործընթացի թափանցիկությունն ու արդյունավետությունն երաշխավորող մեխանիզմներում: 5. Վերանայել վարչարարության ՈԱ մեխանիզմները՝ ապահովելով ՊԻԳԲ շրջափուլի ամբողջական իրականացումը: 6. Մշակել ՄՌԿ քաղաքականություն՝ ուղղված ստորաբաժանումների համապատասխան կադրային ռեսուրսներով ապահովվածությանը:	1. ԱԲՀ-ի կառավարման կոլեգիալ մարմինների վերանայված փաստաթղթեր **/գիտխորհրդի և ռեկտորատի կազմ, կանոնակարգեր/:** 2. ԱԲՀ-ի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների ուսումնասիրության ուղեցույց **/SWOT վերլուծություն/:** 2.1.Ռիսկերի բացահայտման և կառավարման ընթացակարգ: 3. Գործող ֆինանսների բաշխման նոր քաղաքականություն /2020-2021 ուստարվանից/: 4. Գործող էթիկայի կանոնակարգ և հանձնաժողով **/տարեկան հաշվետվություններ/:** 5. Գործող ՊԻԳԲ շրջափուլ ԱԲՀ բոլոր գործընթացներում, **/ըստ տարիների կատարողական զեկույցներ, բարելավման պլան/:** 6. Գործող ՄՌԿ քաղաքականություն **/անձնակազմի բավարարվածության վերաբերյալ զեկույց/:**

Խնդիր 1.2. Համալսարանի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացում՝ կառավարման տեղեկատվական վերլուծական միասնականացված համակարգի ստեղծման միջոցով:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.	*Առաջընթացի գնահատման ցուցիչներ*
1. Ստեղծել համալսարանի կառավարման միասնականացված տեղեկատվական համակարգ: 2. Զարգացնել ԱԲՀ տեղեկատվական համակարգերը, ընդլայնել կառավարման տեղեկատվական համակարգերի կիրառումը կառավարման բոլոր ոլորտներում: 3. Շարունակել ներդնել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ համալսարանի կառավարման ոլորտում: 4. Բարելավել որոշումների կայացման գործընթացում արտաքին և ներքին շահակիցների ներգրավման մեխանիզմները:	1. Համալսարանի կառավարման միասնական տեղեկատվական համակարգի առկայություն **/համակարգի արդյունավետության վերաբերյալ տարեկան զեկույց/:** 2. Համալսարանի կատարելագործված տեղեկատվական համակարգ **/Տես խնդիր 1.2. կետ 1 ԳԱՑ/:** 3. Համալսարանի կառավարման ոլորտում գործող արդիական էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ: 4. Կառավարման բոլոր մակարդակներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավում **/վերանայված հանձնաժողովների կազմ, նիստերի մասնակիցների գրանցաթերթիկներ, արձանագրություններ/:**

2. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Տրամադրել աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ բարձրորակ կրթական ծրագրեր, բարձրացնել ուսանողների բավարարվածության մակարդակը ԱԲՀ-ում ստացած կրթությունից

Խնդիր 2.1. Վերանայել կրթական գործող ծրագրերը համապատասխանեցնելով ազգային և միջազգային կրթական չափորոշիչներին ու աշխատաշուկայի պահանջներին:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.	*Առաջընթացի գնահատման ցուցիչներ*
1. Վերլուծել ՄԿԾ-ների ակնկալվող վերջնարդյունքների համապատասխանությունը ՀՀ ՈԱՇ-ին՝ երաշխավորելով առարկաների բովանդակային հաջորդականությունը: 2. Վերանայել դասավանդման և ուսումնառության մեթոդներին վերաբերող ապակենտրոնացված ընթացակարգերը՝ կիրառելով մեթոդների ընտրության միասնական քաղաքականություն:	1. Գործող ՄԿԾ-ի վերաբերյալ վերլուծական զեկույց, վերանայված ուսումնական պլաններ, առկա քարտեզագրում **/2020-2021 ուստարի/:** 2. Հաստատված և գործող ընթացակարգ **/վերապատրաստված դասախոսական կազմի ցուցակ, հավաստագրեր/:** 3. Վերանայված կրեդիտային համակարգի իրականացման

3. Վերանայել կրեդիտների հաշվարկման, բաշխման և կուտակման գործընթացները՝ իրազեկելով ներքին բոլոր շահակիցներին: 4. Մշակել ՄԿԾ-ների մշտադիտարկման և գնահատման կայուն մեխանիզմներ՝ ըստ ՊԻԳԲ շրջափուլի՝ ընդլայնելով ՄՈՒՀ-ի արտաքին շահակիցների ներգրավվածությունը ՄԿԾ-ների (վերա) մշակման գործընթացներում: 5. Մշակել բենչմարքինգի իրականացման ընդհանուր մեթոդաբանություն և արդյունքների կիրառման մեխանիզմներ: 6. Կատարելագործել գնահատման համակարգը՝ հիմք ընդունելով առարկաների առանձնահատկությունները, ակնկալվող ուսումնառության վերջնարդյունքները և ապահովել դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների կապը ուսումնառության վերջնարդյունքների հետ: 7. Ներդնել ուսանողների պորտֆոլիան որպես գնահատման միջոց՝ պարբերաբար մշտադիտարկելով ուսանողների ձեռքբերած հմտությունները և ուսումնառության ընթացքում առկա խնդիրները:	ուղեցույց, սեմինարների, հանդիպումների արձանագրություններ, մասնակիցների գրանցաթերթիկներ: 4. Վերանայված ՄԿԾ մշտադիտարկման կարգ **/քննարկումների արձանագրություններ, գիտխորհրդի որոշումներ, ՄԿԾ ղեկավարի զեկույց, հարցումների վերլուծություն/:** 5. 2020-2021 ուստարվանից հաստատված և գործող բենչմարքինգի իրականացման ընթացակարգ **/բուհերի ցանկ (առնվազն 3 բուհ), բենչմարքինգի տվյալներ/:** 6. 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակից գործող գիտելիքների ստուգման և գնահատման վերանայված կարգ **/արձանագրություններ, հարցումների արդյունքներ/:** 7. 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակից գործող կլինիկական պրակտիկայի ուսանողի պորտֆոլիա **/փաթեթ/:**

Խնդիր 2.2. Բարելավել առարկայական դասընթացներին վերաբերող փաստաթղթերը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.	***Առաջընթացի գնահատման ցուցիչներ***
1. Բարելավել ավարտական ատեստավորման քննությունները՝ հնարավորություն ընձեռելով ուսանողներին ցուցադրելու ձեռքի հմտություններ: 2. Մշակել և կիրառել ուսանողների պրակտիկայի գնահատման հստակ չափանիշներ՝ պարբերաբար մշտադիտարկելով այդ չափանիշների իրականացումը: 3. Լրամշակել ՄԿԾ-ները ուսանողների և դասավանդողների շարժունությանը նպաստող բաղադրիչներով՝ դիտարկելով ուսումնական այլ հաստատությունների կրթական ծրագրերի հաջողված փորձի ներդրման հնարավորությունները: 4. Լրամշակել դասընթացների նկարագրերը՝ հստակ նշելով ուսանողների համապատասխան բեռնվածությունը, ներառյալ նաև արտալսարանային ժամերը: 5. Բարելավել դասալսումների և դրանց քննարկումների մեխանիզմները:	1. 2020-2021 ուստարվանից գործող ամփոփիչ ատեստավորման վերանայված կարգ **/Հանձնաժողովի նախագահների հաշվետվություններ, քննական հարցաշարեր և տոմսեր (յուրաքանչյուր տոմսում առնվազն մեկ գործնական հմտությունների հարց)/:** 2. 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակից կլինիկական պրակտիկաների կազմակերպման մշտադիտարկման գործող կարգ **/մշտադիտարկման հրապարակված արդյունքներ, առնվազն 2 ծրագիր, իրականացման ժամանակացույց, ըստ ժամանակացույցի կատարողական զեկույցներ/:** 3. Վերանայված 2 ՄԿԾ-եր **/քննարկումների արձանագրություններ, գիտխորհրդի որոշում/:** 4. 2020-2021 ուստարվանից ներդրված նոր առարկայական

	նկարագրեր և ծրագրեր **/ըստ գործող ՄԿԾ-ին համապատասխան/:** 5. Հաստատված և գործող դասալսումների անցկացման և քննարկման նոր կարգ **/տարեկան առնվազն 5 դասալսումների հաշվետվություններ, բարելավման խրհրդատվություններ/:**

Խնդիր 2.3. Ապահովել Համալսարանում որակյալ կադրային ներուժ:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.	*Առաջընթացի գնահատման ցուցիչներ*
1. Մշակել և կիրառել դասախոսների մրցութային հավաքագրման, ընտրության և ընդունելության կարգ: 2. Ընդլայնել պահուստային դասախոսների ցանկը՝ ներգրավելով մի քանի դասախոս միևնույն առարկայի դասավանդման համար՝ կայունության ապահովման նպատակով: 3. Լրամշակել դասախոսների խրախուսման մեխանիզմները՝ հատուկ ուշադրություն դարձնելով գիտահետազոտական աշխատանք իրականացնող անձանց: 4. Ստեղծել դասախոսների վերպատրաստման և մասնագիտական հմտությունների կատարելագործման մեխանիզմներ և տրամադրել համապատասխան ֆինանսական հատկացումներ: 5. Բարելավել մարդկային ռեսուրսների պլանավորումը՝ դասախոսների արտահոսքի կանխման և կայունության հաստատման համար: 6. Ապահովել օտար լեզվի իմացությամբ երիտասարդ որակյալ կադրային ներուժի հոսքը համալսարան:	1. 2020-2021 ուստարվանից գործող ՊԴ կազմի պաշտոնի անձնագիր **/ընտրության և ընդունելության նոր կարգ, ՄՌԿ և ընդհանուր բաժնի վերլուծական զեկույց/:** 2. ՄՌԿ և ընդհանուր բաժնում պահուստային դասախոսների տվյալների էլեկտրոնային բազայի առկայություն **/յուրաքանչյուր առարկայի համար մինչև ծրագրի ավարտը առնվազն 2 դասախոսի տվյալներ/:** 3. Գործող լրամշակված ՊԴ կազմի խրախուսման կարգ **/ՄՌԿ և ընդհանուր բաժնի զեկույց խրախուսված դասախոսների վերաբերյալ (ցանկ)/:** 4. ՊԴ կազմի վերպատրաստման և մասնագիտական հմտությունների կատարելագործման գործող կարգ և ժամանակացույց **/մինչև ծրագրի ավարտը առնվազն 60% վերապատրաստված դասախոսական կազմ, ըստ տարիների հավաստագրեր/:** 5. Հստակ գործող ՄՌԿ քաղաքականություն, դասախոսական կազմի դինամիկական աճի տվյալներ **/ՄՌԿ և ընդհանուր բաժնի տարեկան վերլուծական զեկույց/:** 6. Օտար լեզվի իմացությամբ որակյալ դասախոսական կազմ **(90-100%):**

Խնդիր 2.4. Բարձրացնել համալսարանում ուսումնառությունից և ուսանողական օժանդակ ծառայություններից ուսանողների գոհունակության մակարդակը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է	*Առաջընթացի գնահատման ցուցիչներ*
1. Պլանավորել, կանոնակարգել և իրականացնել շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալների հավաքագրման գործընթաց՝ շրջանավարտների և գործատուների հետ ստեղծելով հետադարձ կապի համակարգեր: 2. Զարգացնել ուսանողների տեղեկատվական-խորհրդատվական, կարիերայի նախապատրաստման, աշխատատեղերի որոնման, կրթական գործընթացի որակի բարձրացման օժանդակության ծառայությունները: 3. Ընդլայնել համագործակցությունը տեղական և արտասահմանյան բժշկական բուհերի և կազմակերպությունների հետ, կնքել համապատասխան պայմանագրեր: 4. Կազմակերպել տարբեր միջոցառումներ օտարերկրյա դիմորդների ընդունելության հոսքն ապահովելու ուղղությամբ:	1. Շրջանավարտների էլեկտրոնային բազա: 2. Ուսանողների բավարարվածության աճ տեղեկատվական, խորհրդատվական, կարիերայի նախապատրաստման օժանդակ ծառայություններից: 3. Համագործակցության գործող առնվազն 3 պայմանագիր կամ հուշագիր: 4. Մշակված և հրատարակված ուսանողի ուղեցույց:

3. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Համալսարանում ձևավորել ժամանակակից պահանջները բավարարող որակյալ ենթակառուցվածքներ և ֆինանսական ռեսուրսներ

Խնդիր 3.1. Համալրել համալսարանի ռեսուրսային բազան և ենթակառուցվածքները:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է	*Առաջընթացի գնահատման ցուցիչներ*
1. Բարելավել ԱԲՀ գրադարանային ֆոնդը՝ ֆինանսական միջոցներ հատկացնելով անգլալեզու մասնագիտական գրականության ձեռքբերմանը: 2. Ներդնել ֆինանսական երկարաժամկետ պլանավորման համակարգ և բազմազանեցնել ֆինանսական հոսքերը՝ նպաստելով յուրաքանչյուր ռազմավարական նպատակի համաչափ զարգացմանը: 3. Կատարելագործել ԱԲՀ փաստաթղթաշրջանառության և տեղեկատվության կառավարման համակարգերը՝ ներդնելով միասնական էլեկտրոնային համակարգ:	1. Արդիականացված գրադարան **/անգլալեզու գրականության ավելացում, առնվազն 30% (էլեկտրոնային և տպագրություն), տարեկան վերլուծական զեկույց:** 2. Ֆինանսական ռեսուրսների բաշխում ըստ ռազմավարական գերակայությունների **/ըստ ՌԶԾ-ի գերակայությունների բյուջեի հաստատված նախահաշիվ/:** 3. Գործող փաստաթղթային շրջանառության էլեկտրոնային համակարգ **/Տես խնդիր 1.2. կետ 1 ԳԱՑ/:**

4. Բազմազանեցնել ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների որակի գնահատման մեխանիզմները՝ շարունակաբար վերլուծելով արդյունքները և պլանավորելով համապատասխան բարելավումներ:	4. Լրամշակված և հաստատված տրամադրվող ռեսուրս-ների որակի գնահատման ընթացակարգ **/լրամշակված հարցաթերթիկներ, տարեկան հարցումների արդյունք-ների վերլուծություն/:**

Խնդիր 3.2 Համալրել և կատարելագործել համալսարանի ռեսուրսային բազան և ենթակառուցվածքները

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է	***Առաջընթացի գնահատման ցուցիչներ***
1. Իրականացնել նյութատեխնիկական բազայի արդիականացման գործընթաց, գնահատելով նյութատեխնիկական ռեսուրսների առկա վիճակը: 2. Իրականացնել լսարանների, մասնագիտացված կաբինետների լաբորատորիաների վերանորոգման ու կահավորման գործընթաց: 3. Լսարանները, կաբինետները և լաբորատորիաները համալրել համակարգիչներով, պրոյեկտորներով, սարքավորումներով, դիդակտիկ նյութերով և ուսումնական գործընթացը խթանող այլ միջոցներով: 4. Բարելավել համալսարանի գիտաբժշկական կենտրոնը: 5. Պարբերաբար արդիականացնել տեխնիկական ու տեղեկատվական միջոց-ները, բարձրացնել համացանցի արագությունը և ապահովել ազատ մուտք համացանց: 6. Ապահովել գրադարանային գործունեության զարգացումը, համալրել գրադարանի նյութատեխնիկական բազան համակարգիչներով, ինտերնետ կապով, էլեկտրոնային գրքային ֆոնդերը: 7. Ապահովել գրադարանի և ներքին շահակիցների փոխադարձ կապը, վեր-հանել գրադարանից օգտվողների կարիքները, կատարել հարցում գրա-դարանի ծառայությունների որակի վերաբերյալ:	1. Առկա ռեսուրսների գնահատման վերաբերյալ զեկույց: **/նյութատեխնիկական բազայի բարելավման միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում, (տարեկան բյուջեի նախագիծ)**: **2. Ուսումնական մասնաշենքի, լսարանների և լաբորատո-րիաների արդիականացման պլան:** 3. Ժամանակակից տեխնիկական միջոցների ձեռքբերման ֆինանսական միջոցների հատկացում **/տարեկան բյուջեում հատկացված հոդված/:** 4. Գիտահետազոտական աշխատանքների իրականացման բարելավված պայմաններ **/արդիականացված գիտա-բժշկական կենտրոն (նոր տարածք, արդիականացված սարքավորումներ)/:** 5. Համացանցից օգտվելու լայն հնարավորություն **(Wi-Fi տիրույթ ամբողջ համալսարանում):** 6. Գրադարանային ռեսուրսներից օգտվելու մատչելիություն **/Տես խնդիր 3.1.կետ 1-ին ԳԱՑ/**: 7. Ուսանողների և դասախոսների շրջանում իրականացված հարցումներ **/տարեկան զեկույց, բարելավման պլան, բույջեում համապատասխան հոդվածի առկայություն/:**

Խնդիր 3.3. Ավելացնել ֆինանսական ներհոսքը՝ որոնել ֆինանսական նոր միջոցներ և իրականացնել դրանց հավասարակշռված և նպատակային կառավարում:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է	*Առաջընթացի գնահատման ցուցիչներ*
1. Բյուջեն պլանավորելիս հաշվի առնել առաջիկա տարիների ընդունելության մոտավոր դինամիկան: 2. Իրականացնել ֆինանսական հավելյալ աղբյուրների ներգրավման գործընթաց: 3. Մշակել ՊԴ կազմի աշխատանքի կատարողականի գնահատման մեխանիզմներ՝ ըստ ուսումնական, գիտահետազոտական ծանրաբեռնվածության: 4. Մշակել և ներդնել ուսանողների ֆինանսական աջակցության համակարգ:	1. Ֆինանսական միջոցների նպատակային հատկացումներ համաձայն ռազմավարական նպատակների և ուղղությունների **/ըստ պոտենցիալ դիմորդների թվաքանակի բյուջեի պլանավորում/:** 2. Ֆինանսական հոսքերը խթանող ծրագրերի իրականացում **/ԳԲՈՒԿ-ի կողմից վճարովի ծառայությունների ավելացում, դրամաշնորհային առնվազն մեկ ծրագիր, աշխատաժողովների կազմակերպում/:** 3. Պդ կազմի ուսումնական ծանրաբեռնվածության հաստատված հաշվարկի նորմեր **/կատարողականներ, նիստերի արձանագրություններ/:** 4. Ուսանողների առաջադիմության խրախուսման հաստատված կարգ **/խրախուսված ուսանողների թիվ ըստ տարիների/:**

4. ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Զարգացնել ուսանողներին մատուցվող ծառայությունները, խթանել դիմորդների հոսքը համալսարան և ուսանողական կազմակերպությունների աշխատանքները

Խնդիր 4.1. Ընդլայնել ուսանողներին տրամադրվող խորհրդատվական և աջակցման ծառայությունները:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է	*Առաջընթացի գնահատման ցուցիչներ*
1. Համակարգել ուսանողների հավաքագրման գործընթացները՝ բարելավելով բուհի պաշտոնական վեբ կայքի տեղեկատվությունը: 2. Համակարգել ուսանողներին տրամադրվող խորհրդատվական ծառայությունները՝ հստակ ժամանակացույց և ընթացակարգեր մշակելով: 3. Խթանել ուսանողների մասնակցությունը գիտահետազոտական աշխատանքներին: 4. Ներդնել բուհ-գործատու համագործակցության մեխանիզմներ՝ շրջանավարտների մասնագիտական գործունեության ուղղորդման և աջակցության	**1.** ԱԲՀ-ի արդիականացված պաշտոնական վեբ կայք **/նոր տարբերակի շնորհանդես, շահակիցների կարծիքներ/:** 2. Վերանայված և հաստատված ուսանողների կրթական կարիքների վերհանման և գնահատման ընթացակարգ **/հաստատված խորհրդատվական ծառայությունների ժամանակացույց, գրանցամատյան, ուսանողների կողմից բավարարվածության վերաբերյալ զեկույց/:** **3.** Վերանայված և հաստատված ՈՒԳԸ կանոնակարգ

նպատակով: 5. Բազմազանեցնել ուսանողների կրթական, խորհրդատվական ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմները:	**/վերանայված խրախուսման կարգ, հաստատված ամբիոնային գիտական թեմաներ (տարեկան առնվազն 2 տպագրված հոդված)/:** **4.** Բուհ-գործատու համագործակցության գործող ընթացակարգ **/շրջանավարտների էլեկտրոնային բազայի առկայություն, զբաղվածության վերաբերյալ տարեկան զեկույց/:** 5. Ուսանողների կրթական կարիքների վերհանման և գնահատման գործող նոր ընթացակարգ **/լրամշակված հարցաթերթիկներ, հանդիպումների ժամանակացույց (տարեկան առնվազն երկու հանդիպում) ամփոփված արդյունքների հիման վրա բարելավման պլան/:**

Խնդիր 4.2. Ընդլայնել ուսանողական ինքնավարությունը, ապահովել ուսանողության մասնակցությունը համալսարանի կառավարմանը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է	*Առաջընթացի գնահատման ցուցիչներ*
1. Ակտիվացնել ՈւԽ աշխատանքները, խրախուսել ուսանողների կողմից միջոցառումների կազմակերպման նախաձեռնությունները, միջոցառումների կազմակերպումը դարձնել բազմաբնույթ: 2. Ապահովել ուսանողների ակտիվ և արդյունավետ մասնակցությունը համալսարանի կառավարմանը: 3. Ապահովել ուսանողների մասնակցությունը ուսումնական ծրագրերի իրականացման, մշտադիտարկման և վերահսկողության գործընթացում: 4. Նպաստել ուսանողների կրթական, գիտական, բարոյական, հոգևոր և մշակութային աշխարհայացքի զարգացմանն ու հարստացմանը: 5. Խրախուսել ուսանողների կողմից միջոցառումների կազմակերպման նախաձեռնությունները: 6. Իրականացնել միջոցառումներ ուսանողների գեղագիտական դաստիարակությունը զարգացնելու նպատակով: 7. Ապահովել ուսանողների իրազեկվածության աստիճանն իրենց իրավունքների և պարտականությունների իմացության ոլորտում:	1. Արտալսարանային միջոցառումների տարեկան պլան **/արձանագրություններ, տես խնդիր 3.3. կետ 4-րդ ԳԱՑ/**: 2. Կառավարման մարմիններում ուսանողների ներգրավածություն **/գործող հանձնաժողովներում առնվազն 1 ուսանողի առկայություն, նիստերի գրանցաթերթիկներ/:** 3. ՄԿԾ-ների մշտադիտարկման և վերանայման նոր հանձնաժողովի կազմ **/գործող հանձնաժողով, առնվազն 1 ուսանողի առկայություն, նիստերի գրանցաթերթիկներ/:** 4. ՄԿԾ անհրաժեշտ վերջնարդյունքների ձեռքբերում **/2020-2021 ուստարվանից վերանայված ՄԿԾ վերջնարդյունքներ/:** 5. Ուսանողական խորհրդի տարեկան պլան **/միջոցառումների կազմակերպման համար ֆինանսական**

	միջոցներ բյուջեում, կատարողական զեկուցագիր/: 6. Գեղագիտական, մշակութային միջոցառումների տարեկան պլան **/տարեկան առնվազն 2 միջոցառումների արձանագրություններ/:** 7. Ուսանողների շրջանում տեղեկատվության բարձրացման միջոցառումների պլան-ժամանակացույց **/յուրաքանչյուր կիսամյակ առնվազն 2 հանդիպում, վերանայված ուսանողի ուղեցույց/:**

5. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

Խթանել միջազգայնացման շարունակական գործընթացները համալսարանական և ծրագրային մակարդակներում

Խնդիր 5.1. Ընդլայնել միջազգայնացման ուղղությամբ արդյունավետ զարգացման և փորձի փոխանակմանը միտված հստակ միջոցառումները:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է	*Առաջընթացի գնահատման ցուցիչներ*
1. Մշակել առաքելության և նպատակներին համահունչ միջազգայնացման և արտաքին կապերի զարգացման քաղաքականություն: 2. Ակտիվացնել տեղական և միջազգային գիտակրթական կազմակերպությունների հետ ինստիտուցիոնալ համագործակցությունը (ուսանողների փոխանակում, դասախոսների վերապատրաստում, համատեղ ծրագրերի ու միջոցառումների իրականացում)՝ ապահովելով բուհի ռազմավարությամբ ամրագրված նպատակների իրականացումը: 3. Ֆինանսական հատկացումներ տրամադրել բուհի միջազգայնացման տարբեր միջոցառումների իրականացման համար՝ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորման նպատակով: 4. Մշակել ուսանողների և ՊԴ կազմի միջազգային վերապատրաստումները խրախուսելու և շարժունության ծրագրերին մասնակցելու մեխանիզմներ ու պարբերաբար գնահատել այդ մեխանիզմների արդյունավետությունը: 5. Վերանայել արտաքին կապերի բաժնի գործառույթները և հետևել դրանց	1. Մշակված և գործող արտաքին կապերի բաժնի ռազմավարական ծրագիր **/միջազգայնացման քաղաքականություն, կնքված համագործակցության առնվազն 3 հուշագիր կամ պայմանագիր/:** 2. Գործող քաղաքականություն **/տես 5.1-ի 1-ին կետը/:** 3. Գործող ՌՀԾ **/տարբեր միջոցառումների համար բյուջե ըստ տարիների առնվազն 7 % աճով/:** 4. Դասախոսների և ուսանողների շարժունությանը նպաստող ռազմավարություն **/փոխանակման առնվազն 2 ծրագիր, մասնակցած ուսանողների և դասախոսների թիվ, արդյունավետության գնահատման տարեկան զեկույց/:** 5. Արտաքին կապերի բաժնի վերանայված գործառույթներ **/տարեկան գործող ծրագիր և ժամանակացույց,**

հստակ իրականացմանը: 6. Որոնել միջազգային դրամաշնորհային ծրագրեր՝ բուհի միջազգային տեսանելիության բարձրացման նպատակով: 7. Ապահովել եվրոպական առաջատար կրթական ծրագրերի հետ բենչմարքինգի իրականացումը և արդյունքների կիրառումը՝ թիրախավորելով բուհի պոտենցիալ ուսանողներին, հստակեցնելով հիմնական շուկան և արդիականացնելով գործող կրթական ծրագրերը:	**կատարողական զեկույցներ/:** 6. Դրամաշնորհային հավանական հիմնադրամների և կազմակերպությունների ցանկ **/առնվազն 1 ծրագրի նախագիծ/:** 7. Գործող ՄԿԾ-ի բենչմարքինգի ընթացակարգ **/իրականացման պլան-ժամանակացույց, առնվազն 2 վերլուծական զեկույց/:**

Խնդիր 5.1. Ընդլայնել և խթանել համալսարանի միջազգային կապերի զարգացմանը Եվրոպական, Ասիական և ԱՊՀ-ի ուսումնական հաստատությունների հետ համալսարանական և ծրագրային մակարդակներում*:*

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է	***Առաջընթացի գնահատման ցուցիչներ***
1. Իրականացնել արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման արդյունավետ քաղաքականություն, ընդլայնել և ամրապնդել համագործակցությունը եվրասիական գիտակրթական կառույցների հետ: 2. Միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ իրականացնել համատեղ գիտակրթական միջոցառումներ: 3. Նպաստել ուսանողների և ՊԴ կազմի շարժունության ձևերի կիրառմանը, ընդլայնելով միջազգային կրթական գիտաժողովներին, սեմինարներին և այլ կրթական ծրագրերին մասնակցությունը: 4. Պայմանավորվածություն ձեռք բերել միջազգային գործընկեր գիտակրթական կազմակերպությունների հետ ՊԴ կազմի վերապատրաստման դասընթացների կազմակերպման և փոխանակման շուրջ: 5. Կազմակերպել հրավիրյալ դասախոսների ներգրավումը ուսումնական գործընթացում:	1. Կնքված համագործակցության պայմանագիր կամ հուշագիր **/առնվազն 3/:** 2. Կազմակերպված միջազգային գիտակրթական միջոցառումներ **/առնվազն 2 միջազգային միջոցառում/:** 3. ՊԴ և ուսանողների շարժունության վերաբերյալ կատարողական զեկույցներ, գործող պայմանագրերի շրջանակներում **/տարեկան առնվազն 1 միջազգային միջոցառման մասնակցություն/:** **4.** Գործող համաձայնագրեր և պայմանագրեր **/առնվազն 2 միջազգային վերապատրաստում, մասնակիցների ցանկ/:** 5. Հրավիրված դասախոսներ, կազմակերպված դասախոսություններ **/տարեկան առնվազն 1 դասախոս, հաշվետվություններ/:**

Խնդիր 5.2. **Ընդլայնել և ապահովել կապը հանրության հետ, զարգացնել շարունակական կրթությունը:**

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է	***Առաջընթացի գնահատման ցուցիչներ***
1. Մշակել և կիրառության մեջ դնել հաշվետվողականության կարգ, և հաշվետվություններում ապահովել վերլուծական մոտեցումը: 2. Ապահովել ԱԲՀ կայքի բարելավումը և շարունակական զարգացումը՝ ներգրավելով տարբեր թիրախային խմբեր և ընտրելով համապատասխան նպատակային բովանդակություն, և ապահովել ԱԲՀ-ի գործունեության	**1.** Մշակված հաշվետվությունների նոր ձևաչափ **/նոր ձևաչափով ստորաբաժանումների տարեկան հաշվետվություններ/:** 2. Արդիականացված կայք **/կայքի նոր տարբերակի շնորհանդես, հաճախելիության տարեկան ցուցանիշներ/:**

վերաբերյալ տեղեկատվության թափանցիկությունն ու հասանելիությունը ՄՈՒՀ-ի կայքի միջոցով: 3. Տեսանելի դարձնել և ակտիվորեն խթանել ԱԲՀ-ի Գիտաբժշկական ուսումնական կենտրոնի դերը՝ որպես համայնքին ծառայելու կարևոր միջոց՝ լրացուցիչ և շարունակական կրթության ծառայություններ մատուցելու միջոցով:	3. Ծառայությունների մատուցման վերանայված ընթացակարգեր:

6. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ընդլայնել դասախոսական և ուսանողական համակազմի ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում, նպաստել ակադեմիական համագործակցության ընդլայնմանը և հետազոտական աշխատանքների միջազգայնացմանը

Խնդիր 6.1. Նպաստել Համալսարանում ՊԴ կազմի մասնագիտական և հետազոտական գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է	*Առաջընթացի գնահատման ցուցիչներ*
1. Հստակեցնել ԱԲՀ-ի գիտահետազոտական գործունեության ուղղությունները, շեշտադրել գերակայությունները և դրանց ռազմավարական նշանակությունը տարբեր մակարդակների համար: 2. Կատարել համապատասխան ֆինանսական ներդրումներ ԱԲՀ-ի գիտահետազոտական գործունեությունը զարգացնելու և գիտական աշխատանք կատարելու համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով՝ վերահսկելով ֆինանսական ներդրումների և միջոցների արդյունավետ օգտագործումը: 3. Մշակել հետազոտական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական և ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականություն: 4. Ստեղծել հստակ մեխանիզմներ՝ ապահովելու գիտահետազոտական գործունեության կապը ուսումնառության գործընթացի հետ: 5. Մշակել և կիրառել գիտահետազոտական աշխատանքի արդյունավետության և արդիականության գնահատման գործիքներ և մեխանիզմներ: 6. Մշակել գիտահետազոտական գործունեության միջազգայնացման հստակ ռազմավարություն, խթանել միջգիտակարգային ուսումնասիրությունները՝ ընդլայնելով միջազգայնացման հնարավորությունները:	1. **Լրամշակված, հաստատված և գործող հետազոտական ոլորտի առաջընթացի ցուցիչներ:** 2. Հաստատված գիտական մասի ռազմավարական պլան **/բյուջեում գիտահետազոտական գործունեության նպատակով ֆինանսական միջոցների հատկացում՝ ըստ ԱԲՀ-ի ֆինանսական ռեսուրսների պլանավորման և բաշխման հոդված 6-ի/:** 3. Վերանայված ՄԿԾ-ներ **/ամբիոնների և գիտական մասի տարեկան կատարողական զեկույցներ/:** **4.** Գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության և արդիականության գնահատման ընթացակարգ **/ըստ կատարողականի գնահատման հաշվետվություններ/:** **5.** Գործող միջազգայնացման ռազմավարություն **/առնվազն 3 պայմանագիր կամ հուշագիր/:** 6. Գործող հստակ պլան և ժամանակացույց **/մշտադիտարկման հաշվետվություններ ըստ տարիների/:**

7. Պլանավորել ամբիոնների գիտահետազոտական աշխատանքներն ըստ ՄՈՒՀ-ի գիտահետազոտական առաջնահերթությունների, իրականացնել դրանց մշտադի-տարկումը և քննարկումը:	

Խնդիր 6.2. Խթանել Համալսարանում հետազոտական գործունեությունը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է	*Առաջընթացի գնահատման ցուցիչներ*
1. Մշակել և կիրառել նորամուծությունների ու գիտական արդյունքների առևտրայնացման հստակ մեխանիզմներ՝ արդյունքները վերլուծելով տարեկան կտրվածքով: 2. Բազմազանեցնել կիրառական գիտահետազոտական աշխատանքները գործա-տուների հետ համագործակցության շրջանակներում: 3. Ուսանողներին ընդգրկել ամբիոնների գիտահետազոտական աշխատանքներում: 4. Վերանայել ՈՒԳԸ կանոնակարգը՝ շեշտադրելով ՈՒԳԸ-ի նպատակներն ու գործառույթները: 5. ԳԲՈՒԿ-ի հենքի վրա իրականացնել գիտահետազոտական աշխատանքներ՝ ուսանողների ակտիվ ներգրավմամբ: Միաժամանակ քննարկել, վերլուծել և հակիրճ զեկուցումների/հոդվածների տեսքով ներկայացնել ԳԲՈՒԿ-ի այցելուների դեպքերը՝ որպես առանձին կլինիկական դեպքեր և կատարել էպիդեմիոլոգիական հետազոտություններ՝ վիճակագրական մոտեցումների կիրառմամբ: 6. Մասնակցել մրցութային կարգով տրամադրվող հետազոտական դրամաշնորհային ծրագրերին՝ սարքավորումների և գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերման նպատակով: 7. Կատարել համատեղ գիտահետազոտական աշխատանքներ հայաստանյան և արտասահմանյան գիտական կենտրոնների հետ:	1. Գիտական հետազոտութնունների առևտրայնացման գործող ընթացակարգ **/հետազոտությունների նոր ցանկ, առևտրայնացման ենթակա գիտական թեմաների ցանկ/:** 2. Գիտական հետազոտությունների առևտրայնացման գործող ընթացակարգ **/հետազոտությունների նոր ցանկ, առևտրայնացման ենթակա գիտական թեմաների ցանկ/:** 3. Հաստատվախ ամբիոնական գիտական թեմաներ **/ամբինի կատարողական զեկույցներ, կատարված աշխատանքներ/:** 4. Վերանայված ՈՒԳԸ կանոնակարգ: 5. ԳԲՈՒԿ-ի վերանայված և հաստատված ռազմավարություն և ժամանակացույց **/հետազոտական թեմաներ, վերլուծական զեկույցներ, հրապարակված տարեկան առնվազն 2 հոդված/:** 6. Դրամաշնորհային ծրագրերի հավանական հիմնադրամ-ների և կազմակերպությունների ցանկ /**դրամաշնորհային առնվազն 1 ծրագրի նախագիծ/:** 7. Համատեղ հավանական հետազոտական թեմաներ, ժամանակացույց **/իրականացված առնվազն 2 համատեղ հետազոտությունների հաշվետվություններ/:**

Խնդիր 6.3. Խթանել Համալսարանում հետազոտական գործունեության միջազգայնացումը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է	*Առաջընթացի գնահատման ցուցիչներ*
1. Արտասահմանյան գործընկեր բուհերի և գիտաբժշկական կազմակերպությունների հետ կազմակերպել կարճաժամկետ և երկարաժամկետ դասավանդման ծրագրեր կամ սեմինարներ: 2. Նախաձեռնել ուսանողների և երիտասարդ գիտնականների գիտաժողովների անցկացումը, վերականգնել և ակտիվացնել համալսարանի գիտական ներուժի ներգրավածությունը գիտահետազոտական գործընթացում: 3. Կազմակերպել ուսանողական համալսարանական և միջհամալսարանական սեմինարներ և գիտաժողովներ: 4. Նպաստել հանրապետական և միջազգային վարկանիշ ունեցող գիտական հանդեսներում համալսարանի դասախոսների հոդվածների և ուսումնասիրությունների հրատարակությանը:	1. Միջոցառումների կազմակերպման օրացուցային պլան **(առցանց կամ ստացիոնար տարեկան առնվազն 1 ծրագրի հաշվետվություն):** 2. Գիտական մասի ռազմավարական պլան **/իրականացման ժամանակացույց,առնվազն 3 կատարողական զեկույցներ/**: 3. Գիտական մասի և ՈւԳԸ-ն պլանի համաձայն կազմակերպված միջոցառումներ **/տարեկան առնվազն 1 գիտաժողովի, և 1 սեմինարի հաշվետվություն, արձանագրություն/:** 4. Համալսարանի դասախոս-գիտնականների աշխատանքների տպագրություններ **/ըստ տարիների թվաքանակի աճի ցուցանիշ/:**

7.ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Համալսարանի որակի ներքին ապահովման գործընթացը համապատասխանեցնել բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական և ՀՀ մասնագիտական կրթության որակի ապահովման չափանիշներին:

Խնդիր 1. Կրթական համակարգի որակի ապահովում:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է	*Առաջընթացի գնահատման ցուցիչներ*
1. Վերանայել ԱԲՀ-ի ՈՆԱ քաղաքականությունն ու նպատակները՝ կանոնադրական գործունեությունը և ռազմավարական նպատակները համապատասխանեցնելով վերջիններիս: 2. Մշակել ՈԱ ուղղված քաղաքականության իրականացման անհրաժեշտ ընթացակարգեր, դրանց գնահատման և արդյունավետության չափման մեխանիզմներ՝ բարելավելով ՈՆԱ համակարգը և մեխանիզմները: 3. Մշակել հետադարձ կապի առավել արդյունավետ մեխանիզմներ:	1. Վերանայված ՈՆԱ քաղաքականություն և ընթացակարգեր **/ՌԶԾ գործող ժամանակացույցի կատարողական զեկույցներ/:** **2.** Գործող ՈԱ քաղաքականության արդյունավետության գնահատման հստակ գործիքներ **/հարցումների անցկացման կարգ, ըստ տարիների գնահատման հաշվետվություն, բարելավման պլան/:**

4. Ապահովել ՈԱ կառույցներում ընդգրկված անձնակազմի պարբերական վերապատրաստման դասընթացների իրականացումը: 5. Ընդլայնել և ակտիվացնել շահակիցների (հատկապես արտաքին) ներգրավվածությունը ՈԱ գործընթացներում և գնահատել ներգրավվածության արդյունավետությունը: 6. Կանոնակարգել տվյալների կառավարման գործընթացները և հստակեցնել ԱԲՀ-ի տարբեր ստորաբաժանումների միջև տեղեկատվության տարածման ու վերջինիս կառավարման մեխանիզմները: 7. Իրականացնել ՈԱԲ-ի աշխատակիցների կարիքների վերհանում, կատարողականի գնահատում, և արդյունքների հիման վրա ընդլայնել նրանց մասնագիտական զարգացման հնարավորությունները: 8. Բարելավել ՈԱԲ-ի և ստորաբաժանումների միջև համագործակցությունը՝ նպաստելով ՈԱ գործընթացների վերաբերյալ համընդհանուր ընկալման և իրազեկվածության բարձրացմանը: 9. Մշակել տրամադրված մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների համապատասխանության և արդյունավետության գնահատման մեխանիզմները՝ գնահատելով որակի ներքին ապահովման գործընթացների իրականացման նպատակով բուհի տրամադրված մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների բավարարությունը: 10. Ապահովել ՊԻԳԲ շրջափուլի կիրառումը ԱԲՀ-ի բոլոր գործընթացներում և կառավարման բոլոր մակարդակներում՝ նպաստելով որակի մշակույթի ընդլայնումը:	3. Գործող հետադարձ կապի հստակ մեխանիզմ **/քննարկումների տարեկան պլան-ժամանակացույց. արձանագրություններ, կարծիքներ/:** 4. Գործող վերապատրաստման ընթացակարգ, ծրագիր և ժամանակացույց **/մինչև ծրագրի ավարտը 100% վերապատրաստված անձնակազմ, հավաստագրեր, տարեկան հաշվետվություն/:** **5.** Վերանայված գործող հանձնաժողովներ և աշխատանքային խմբեր **/ըստ ժամանակացույցի կատարողական զեկույցներ/:** **6.** Գործող փաստաթղթային շրջանառության էլեկտրոնային համակարգ **/կատարողական զեկույց համաձայն պլանի/:** 7. Որակի ապահովման պատասխանատուների կարիքների վերհանման և կատարողականի գնահատման ընթացակարգ **/գործող ժամանակացույց, հանդիպումներ, քննարկումների, վերապատրաստումների, խորհրդատվությունների հրապարակված տվյալներ/:** 8. Գործող ԱԲՀ-ի նոր գծային կառուցվածք **/տարեկան կատարողական զեկույցներ/:** **9.** Գործող ԱԲՀ-ի նոր գծային կառուցվածք **/գործող ընթացակարգեր, կարիքների վերհանման, գնահատման վիճակագրական տվյալներ, բարելավման տարեկան պլան/:** 10. Գործող ԱԲՀ-ի նոր գծային կառուցվածք **/կատարողական զեկույցներ՝ համաձայն ՊԻԳԲ շրջափուլի/:**